ՍՀԶ.

Թաթարխանն եկն եմուտ ի ըստամպոլ ի հոկտմ. 17 և չուեաց ի հոկտ. 29։ Եւ նորա բանիւ Լիվոռ պէյն՝ կապայ հագաւ և եղև ուլահ պէյի։ Այս այն պէյն է, որ յառաջն էր թարգման թագաւորին, և էր որդի գլխաւեալ թարգմանին, և եղև պուղտան պէյի. իսկ այժմ եղև ուլահ պէյի, քանզի թաթարխանն խնդրեալ է ի թագաւորէն առնել զսա ուլահ պէյի։ Ասէ ցնա թագաւորն. ո՞չ սա է նա, որ մինչ պուղտան պէյն էր, նորա ամբաստանութեամբն զքէն դու մանզուլ եղեր ի թաթարխանութենէդ։ Պատասխանի ետ թաթարխանն. այժմ չէ ժամանակ վրէժխնդրութեան, զի այժմ պիտոյ է ինձ այր (պանա ատամ լազըմ տըր), զի ժամանակ պատերազմի է։ (Հ. Յակ. Զամչ. առ Հ. Միք. Զամչ. և քեռորդին Ստեփան, 1768 դեկտ. 18. [Կ. Պոլիս])։

ՍՀԼ.

Կարծեմ լուեալ է ձեր զմահն պապին[1], որ եղև յերեկոյի գէր հինգշաբթուն, ի չորս ժամու գիշերուն յանկարծակի, ի սաստիկ գիրութենէ և յանձկութենէ. և յայսմ հետևեալ շաբաթու յաւուր չորեքշաբաթու մտանելոց են Գարտինալքն ամենեքին ի գոնգլաւն։ (Հ. Գէորգ Պաղտ. առ Հ. Մկրտիչ Ան. 1769 փետր. 11 Հռոմ)։

ՍՀԼ.

Ասեն, թէ տակաւին յամելոց է ընտրութիւն պապին. քանզի քսանևչորս ճիզվիթեան գարտինալք զոն որք մահուշափ երդուեալք ոչ հակին խնդրոց թագաւորաց։... գրեաց եղբայր պարոն Յովակիմին Նազարեան յանցեալ շաբաթն թէ ի պատրաստի են և ի կամս, զՄուրատեան տէր Միքայէլն առնել ժողովրդապետ [Լիվոռնոյի]։ Եւ յայսմ շաբաթոջ զրէ թէ արդէն հաստատեցին բանս ընդ նմա, և գալոց է ի յալ[ի]կուռնայ ի Ֆիորէնցայու յայսոսիկ աւուրս ընդ փիզայու եպիսկոպոսին, և հաստատելոց են զնա ինքեանց ժողովրդապետ. և սա ևս ի բաղձացողացն է լինիլ անդ ժողովրդապետ։ (Հ. Գէորգ Պաղտ. առ Հ. Մկրտիչ Ան. 1769 մայիս 6 Հռոմ)։

ՍՀԲ.

Լուայ, թէ ձայն իցէ ի Վենետիկ, թէ զմենաստան սրբոյն անտոնի՝ որ այդր ի քաղաքն է գնելոց են պատրի արմենիքն։ Թէ իրաւ իցէ այս ձայն, և թէ ոչ, չգիտեմ. միայն թէ ես լաւ համարիմ, զի թէ կարելի իցէ, գնեսցուք. և մեր լիցի այն պատուական և ընդարձակ տեղի։ (Հ. Զաքարիա Ա. առ Մելգոնեան, 1769 յունիս 15. [Կ. Պոլիս])։

ՍՁ.

Արդ՝ տեսաք զգովեալ Թրիէսթն ի մերայնոց, որ է քաղաք բազմամարդ իբր զՎենետիկ. թէպէտ և փոքրիկ. և են ի նմա ապարանք ըստ չինուածոյ ապարանից Վենետիկեան գիւղից, է պայծառ, և լի զանազան ազգաց վաճառականաք. հանապազորդ աշխատին մարդիկ պէսպէս արուեստաւորաք

---

1. Կղեմէս ԺԳ.։